**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/38» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 10-ը հունվարի 2019թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝

*Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝*

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔԾԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,

*գնահատողներ՝*

ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾԾ 3-րդ դասի խորհրդական Է. Համբարձումյան,

ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան:

*Քարտուղար՝*

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ. Տերյան)

1. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ և «ԴԵՍԻ» ՍՊԸ ընթացակարգի նույն չափաբաժնին մասնակցության վերաբերյալ:
2. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:*

**1. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ և «ԴԵՍԻ» ՍՊԸ ընթացակարգի նույն չափաբաժնին մասնակցության վերաբերյալ**

---

(Գ. Տերյան)

1.1 Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ և «ԴԵՍԻ» ՍՊԸ կողմից ներկայացրած իրական շահառուների ցուցակում բաժնետերեր են հանդիսանում համապատասխանաբար Վաղինակ Ժորժիկի Եղիազարյանը և Երվանդ Վաղինակի Եղիազարյանը: Հանձնաժողովը հաշվի առնելով, որ վերջիններս կարող են լինել փոխկապակցված անձիք, ինչը հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետին և ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 32-րդ կետի 16-րդ ենթակետին, 10.01.2019թ. եւ ԴՎԱ/42 գրությամբ հարցում կատարեց ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով վերոնշյալ դեպքի առկայությունը պարզելու նպատակով և հաշվի առնելով ձեռքբերվող ապրանքների կարևորությունը որոշեց նիստը չընդհատել և հարցին անդրադառնալ վերոնշյալ գրության պատասխանից հետո:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:*

**2. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Գ. Տերյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/38» ծածկագրով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրն առկա են և համապատասխանում են ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ԳԴԱԿ» ՍՊԸ, որտեղ 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է հավելված 4-ով ներկայացված էսքիզը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47 րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը՝ և ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունը և նիստը շարունակվել է:

*ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ «ԳԴԱԿ» ՍՊԸ, որի պարտքը կազմում է 4000 ՀՀ դրամ, որը չի գերազանցում մասնակցի գնային առաջարկի 1%-ը: Իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:*

2.2 21.01.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ԳԴԱԿ» ՍՊԸ, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ և «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժինում, որտեղ նրանք ճանաչվել են առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/38» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող(ԳԱՊ)** | Գ. Ռստյան |
| **Գնահատող** | Վ. Պապյան |
| **Գնահատող** | Է. Համբարձումյան |
| **Գնահատող** | Վ. Բարսեղյան |
| **Քարտուղար** | Գ. Տերյան |